

- ՆՄԻՐԱ ՄԻՄՈՆՅԱՆ • ՈՒՐԱ ՍԻՄՈՆՅԱՆ •
- ՍԵՆՆԱԿՆԻՆ • ՄԱՐԿԵՆ ԶԵՆՈՐ

84(5 Арм)

С 37

ԿՈՐՈՆՆԵՐԻ ԵՎ ՁԵՆՔԲԵՐՈՒՄԵՐԻ ԽՍՍՓՄՆԻ

ДОРОГАМИ ПОТЕРЬ И ОБРЕТЕНИИ



12+

ՆԱԻՐԱ ՍԻՄՈՆՅԱՆ
ՊԱՎԵԼ ԶԵՐԿԱՇԻՆ

Երեւանի քաղաքացիական
պաշտպանության կենտրոնի
գրասենյակում

ԿՈՐՈՒՍՏՆԵՐԻ ԵՎ ԶԵՐԿԱՇԻՆԻ
ԶԵՆՔԲԵՐՈՒՄՆԵՐԻ
ՃԱՍՓԱՆԵՐՈՎ

Բանաստեղծություններ

27.12.2014

Իսանտի-Մանսիկ
Յուզրաֆիկ
2014

УДК 821

ББК 84(0)=51 + 84(2)64

U 37

U 37

Միմոնյան Ն. Ա., Չերկաշին Պ. Ռ.

Կորուստների և ձեռքբերումների ճամփաներով
Բանաստեղծություններ

Հայերենից թարգմանությունը՝ Պ. Ռ. Չերկաշինի
Ռուսերենից թարգմանությունը՝ Ն. Ա. Միմոնյանի
Նախաբանը՝ Էմմա Ախտյանի
Վերջաբանը՝ Միխայիլ Ռյաբիի
Նկարիչ՝ Պ. Ռ. Չերկաշին

Խանտի-Մանսիսկ:

«Յուգրաֆիկա» հրատարակչություն, 2014: – 116էջ:

Բանաստեղծների մտերմության հետ մտերմանում են նաև նրանց տողերը: Սրա հավաստիքն է ինքնատիպ երկլեզու այս ժողովածուն, որում ռուս բանաստեղծ Պավել Չերկաշինն ու հայ բանաստեղծուհի Նաիրա Միմոնյանը, հեղինակային բանաստեղծություններին զուգահեռ, թարգմանել են իրենց հոգեհարազատ ստեղծագործությունները իրենց մայրենի լեզուներով:

Գիրքը լույս է տեսել հեղինակների ծախսերով:

ISBN 978-5-905751-44-8

© Միմոնյան Ն. Ա., բան., թարգ., 2014

© Չերկաշին Պ. Ռ., բան., թարգ., 2014

© «Յուգրաֆիկա» հրատարակչություն, 2014

НАИРА СИМОНЯН
ПАВЕЛ ЧЕРКАШИН


ДОРОГАМИ ПОТЕРЬ И ОБРЕТЕНИЙ

Стихотворения

*Государственная
библиотека Югры
от русского автора*

Ханты-Мансийск
Юграфика
2014

Меню
- 0176169 -



УДК 821

ББК 84(0)=51 + 84(2)64

С 37

С 37 **Симонян Н. А., Черкашин П. Р.**

Дорогами потерь и обретений : стихотворения / Пер. с арм.

П. Р. Черкашина; Пер. с рус. Н. А. Симонян; Предисл. Эммы Ах-
тян; Послесл. М. М. Рябия; Худож. П. Р. Черкашин. – Ханты-Ман-
сийск : Издательство Юграфика, 2014. – 116 с. : ил.

Когда дружат поэты, дружат и их строки. Свидетельством тому слу-
жит эта по-своему уникальная двуязычная книга, где русский поэт
Павел Черкашин и армянская поэтесса Наира Симонян перевели
близкие им строки друг друга на языки своих народов.

Издание осуществлено на авторские средства.

ISBN 978-5-905751-44-8

© Симонян Н. А., стихи, перевод, 2014

© Черкашин П. Р., стихи, перевод, оформл., ил., 2014

© Издательство «Юграфика», печать, 2014

Նախաբան

Ասում են, բանաստեղծը նաև խոսող պատմություն է, իր ժամանակի և իր ժամանակակիցների գեղարվեստական տարերքը:

Փնտրեցի պատմություն Նաիրա Միմոնյանի ստեղծագործության մեջ, շատ փնտրեցի ու, ի վերջո գտա, գտա և ուրախացա. Նաիրան իր ժամանակի զավակն է, իր ժամանակի խորը դրոշմը հոգում: Իր ժամանակի ծնունդ է նրա մտածելակերպը, իր ժամանակի ծնունդ են նրա բանաստեղծությունները՝ սնուցված հայ քնարերգության դարերի խորքերն հասնող կենսատու արմատներով և արդի գրականության տաղաչափական նորարարություններով, իր ժամանակի թելադրանքով է նա այսօր հեռավոր հյուսիսում մարդու և քաղաքակրթության պատմությունը հազարամյակների խորքերից ներկա հասցրած հայ ժողովրդի ճակատագրի մի մասը դարձած, հարավի տաք սերն ու աննկուն հավատը հոգում փայփայելով: Ահա, դարավոր այս փորձի, սիրո ու հավատի ատաղձի վրա է հյուսվում նրա ստեղծագործությունը՝ մերթ մեղմ, քնքուշ, մերթ ըմբոստ ու կոպիտ: Հակասականության այս երկու ոլորտը Նաիրայի բանաստեղծությանը քնարականությանն ու զգացմունքայնությանը զուգահեռ, երբեմն վերացականություն է հաղորդում, երբեմն հոգեկան ապրումները, մտորումները դառնում են անձև այնպես, որ ընթերցողն անմիջապես չի ընկալում դրանք, մանավանդ, երբ ինքը հեղինակը «անստվեր տեղ է փնտրում»:

«Եթերի նման եմ, թափանցիկ,

Բայց և բարդ է, հանելուկ է էությունն իմ»...

(Հրաշալի ինքնաբացահայտում, ինքնագնահատում...) Ու սպասում է ընթերցողը, էջ առ էջ թերթելով Նաիրայի բանաստեղծությունները սպասում է, թե երբ են բացվելու «գաղտնիքները թաքուն», երբ է լուծվելու հանելուկը, երբ է վերձանվելու բանաստեղծի հոգին, երբ են մտքերը հանուրին տրվելու... Որոնման ճանապարհի հաղթական ավարտը

տրվում է միայն այն պահին, երբ Նաիրային դիտում ես իր ժամանակի մեջ: Սեր, կարոտ, ցասում, հիասթափություն, հավատ և հույս, հույս, հույս անհատում, հույս, որ Ռուբիկոնն անդին, հորիզոնից անդին կա, հաստատապես կա մեկ այլ երկնակամար, որը պահող հորիզոնը չի փլվում երբեք, և որտեղ հանդիպում են կարոտյալ հոգիները այլևս չբաժանվելու հեռանկարով:

«Ես ճամփին եմ, դու այն ափն ես գետի,
անճանաչ է օրն իմ ճակատագրում,
քեզ հասու է խորհուրդը կենաց,
քեզ հասու է տիեզերքի ամբողջությունը»...

Թվում է, նա Բարի Սերմնացանի ափի մեջ տաքացած, Բարի Սերմնացանի ափում արդեն կյանքի կոչված այն հատիկն է, որին հաստատ ծլարձակել է վիճակված, և որը պայմանավորելու է նոր հունդերի ծնունդը Մահվան ստվերից Կյանքի հաղթանակը փառավորելու համար:

Բանաստեղծուհու ապրումները անկեղծ են, սրտաբուխ: Նա պատրաստ է հետիոտն անցնել իր ճամփաները, քանզի արքայադուստրը չէ կյանքի ու չունի կառքեր, չունի աշխետ ձի...

«Ես արքայադուստրը չեմ կյանքի,
Ես չունեմ կառքեր, աշխետ ձի,
Հետիոտն կանցնեմ ճամփաներն իմ,
Ուր տենչում է իմ անեղծ հոգին»:

Հայտնի փաստ է, որ յուրաքանչյուր սիրերգություն առնչվում է տվյալ հեղինակի անձնական կենսագրության հետ ևս: Նաիրայի ստեղծագործության մեջ մենք տեսնում ենք սիրող կնոջը, գորովալի մորը, քնքուշ քրոջն ու դստերը, սակայն անձնական վերաբերմունքը, բխելով հանդերձ հեղինակի հոգուց, նրա ապրած կյանքից, դառնում է անանձնական, դառնում է համամարդկային:

Հետաքրքիր են Սիմոնյանի իր բնաշխարհին, իր տանը նվիրված կարոտի երգերը:

Ոչ միայն հայրենի բնօրրանը՝ Վրաստանի բիբլիական Ջավախք աշխարհն է կարոտում բանաստեղծուհին, այլև մայր հայրենիքը Հայաստանը, որը նրա հոգու տնակն է, տենչն ու ապաստանն իր, և չնայած ցուրտ եզերքներով անցնող հեռավորությանը, համոզված է հեղինակը, որ մի օր, երբ հոգու կրակի անթեղը թիթեռի պես հոգեվար թևերը թափահարի

լույսի ու ջերմության կարոտով, երբ ինքը վերադառնա, հայրենիքը կների իրեն՝ իբրև անատակ որդուն իր գիրկը առնող հայր... Հայրենիքի այս կանչը, իբրև հայ ժողովրդի պատմական ճակատագրի դրսևորում, հայ պոեզիայում միշտ հնչել ու հնչում է: Սա այսօր սփյուռքահայ գրականության տարածված թեմաներից է, որ յուրովի դրսևորվել է Նաիրայի ստեղծագործության մեջ՝ մեկ անգամ ևս ցույց տալով Նաիրայի անխախտ միասնությունը իր ժամանակի հետ: Բանաստեղծական գեղեցիկ պատկերացում ու Սիմոնյանն ընթերցողին մտովի տանում է իր ծննդավայր, թափուր մնացած իր տունը.

«Կորավ մանկությունը: Գյուղական փողոցները թափուր մնացին՝
Քարաքոս, մամուռ, ջրխոտեր հագած:
Անհավատարմություն կա մեր մեջ ի սկզբանե,
Մենք հերթով լքում ենք բոլորին»:

Հարուստ է, ճոխ Նաիրայի լեզուն և զարմանալիորեն համապատասխանում է իր մտածելակերպին, որ մերթ վերացականության թևին է առնում ընթերցողին՝ անճանաչ, անվերծանելի եզերքներ հասցնելով, մերթ պարզ ու որոշակի ուրվագծում է պատկերներ, որոնց թվում է կհասնես, թե ձեռքդ պարզես...

Հետաքրքիր են նաև Նաիրայի թարգմանական աշխատանքները ռուս բանաստեղծ Պավել Չերկաշինի ստեղծագործություններից: Այստեղ արդեն, բնականաբար, նկատելի է երկու ստեղծագործող հեղինակների՝ Պավել Չերկաշինի և Նաիրա Սիմոնյանի առկայությունը, Չերկաշինը ժամանակակից մարդու բանական հայացքներով և բանաստեղծական արվեստի ավանդական միջոցների վարպետ համադրումով, Սիմոնյանը իր մտածելակերպի, արտահայտչական իր ձևերի միջոցով:

Էմմա Ախտյան

Պրոֆեսոր

«Հայ գիտական կենտրոն Վրաստանում»

կազմակերպության նախագահ

(Թբիլիսի, Վրաստան)

Предисловие

Говорят, писатель – это отчасти тоже говорящая история, художественная стихия современников и современности.

Искала я историю в творчестве Наиры Симонян, долго искала, и нашла, наконец, нашла и обрадовалась. Наира – дитя своего времени, несущее глубокую печать этого времени в своей душе. Мышление Наиры – отражение её времён, её стихи – отражение современности, вскормленные плодотворными, жизнедающими корнями многовековой армянской лирики и новыми подходами современной литературы. Под диктовку времени Наира, сохраняя в себе теплоту южной любви и непреклонной верности, живёт сегодня на далёком Севере. Она как продолжение истории человечества и цивилизации армянского народа, как часть судьбы своих предков, дошедших из глубины тысячелетия до наших дней.

На вековом опыте, из материи любви и веры плетутся её стихи: то ласковые и нежные, то непокорные и грубые.

Противоречивость двух подходов в стихах Наиры, параллельно с лиричностью и чувственностью, иногда отражают абстрактность, иногда душевные переживания. Размышления становятся явью, которую читатель не сразу воспринимает, тем более что автор и сама «ищет себе место без тени»...

Вот парадокс: я, как эфир – прозрачна,
Но в то же время сущностью своей
Загадочна, сложна и многозначна»...

Потрясающее самооткрытие, самооценка... Читатель же, перечитывая страницу за страницей её стихи, ждёт, когда раскроются «необъяснимые тайны», когда решатся загадки, когда будет расшифрована душа поэтессы, когда её мысли станут доступными. Путь поиска завершается победой тогда, когда читатель принимает поэтессу в своем времени.

Любовь, тоска, ярость, разочарование, вера и надежда, бесконечная надежда, что за Рубиконом, за горизонтом, есть, точно есть, ещё одна небесная арка, и горизонт держащий эту арку неразрушимой и прочной, и там встречаются тоскующие души, с надеждой больше не расставаться.

Я на дороге, ты – за Рубиконом,
Судьбы безвестен мне грядущий день.
Смысл жизни? – Ясно всё тебе об оном,
Весь космос пред тобою сбросил тень...

Кажется, она, то зёрнышко, согретое в ладонях Доброго Сеятеля, ещё в его ладонях направленное в жизнь, которому изначально дано восхождение, которое зарождает новые ростки из тени Смерти, прославляя победу Жизни.

Душевные переживания поэтессы искренние, задушевные. Она готова пешей пройти свою дорогу, ибо она не принцесса жизни, и нет у неё ни кареты, ни коня...

И мне опять по морю плыть страданий.
Я не принцесса жизни, ни коня,
И ни кареты... Пеший путь скитаний
Туда, куда душа влечёт меня.

Известный факт, что любовное песнопение сталкивается с личной биографией автора.

В стихах Наиры видна любящая женщина, умилённая мать, нежная сестра и дочь, однако личное её отношение, исходящее из пережитой жизни, из души автора становится не личным, общечеловеческим.

Интересные строки тоски по родной земле по родному очагу у Симонян. Она тоскует не только по родному очагу – Грузинскому Джавахку, но и по родной Армении, которая является её душевым домом, страстью и приютом. Несмотря на расстояние, проходящее по холодным краям, поэтесса уверена, что в один прекрасный день, когда искра её души, как умирающая бабочка, тоскующая по свету и теплу, махнёт крыльями, и она вернётся, родина примет её, как любящий отец блудного сына...

Зов родины как проявление исторической судьбы армянского народа, всегда звучал и звучит в стихах армянских писателей. Эта тема и сейчас

насушна в современной поэзии писателей, живущих за пределами родины. Наира не исключение, и это ещё раз доказывает её прочную связь со своим временем. Красивое стихотворное описание и читатель оказывается на родине Симонян, в её покинутом очаге:

На сельских улицах не слышен детский смех,
Всё онемело в страхе запустенья.
Мы неверны, беспечно покидаем всех,
Предательство в нас с самого рожденья.

Богат и щедр её литературный язык, что удивительно соответствует её раздумьям, она читателя ведёт то в абстрактность, в неузнаваемые, неизвестные края, то рисует чёткие и прозрачные эскизы, к которым, кажется, вот-вот притронешься, стоит только руку протянуть...


Интересны также её переводы произведений русского поэта Павла Черкашина. Здесь, конечно же, видно присутствие двух действующих поэтов Павел Черкашин и Наира Симонян: Павел Черкашин со своими традиционными мастерскими поэтическими сопоставлениями, идеями современного человека и Наира Симонян со своими мыслями, своими выразительными формами.

*Эмма Ахтян,
доктор филологических наук, доцент,
Президент организации
«Армянский научный центр в Грузии».
(Тбилиси, Грузия)*

ԿՈՂՈՒՍՏՆԵՐԻ ԵՎ ՁԵՌՔԲԵՐՈՒՄՆԵՐԻ ՃԱՄՓԱՆԵՐՈՎ

Նաիրա Միանյան, թարգմանությունը՝ Պավել Չերկաշինի

Наира Симонян, перевод на русский язык Павла Черкашина



* * *

Կենսագրությունս. այդ ես եմ
հորինել փրկության դաշտում ահռելի,
մոռացությունն Աստծո դուռն ուղեկցող
սանդուղք է, որ ջնջի, մաքրագրի...
Աշխարհն այս մոլորություն է
ձայնի, գույնի ու բույրերի:
Ես նման էի Աստծուն, երբ մորս արգանդում
երազի ու արթնության
Ճշմարտությունն ունեի,
և տեղի կենսոլորտը
համընկնում էր դրախտին:
Կենսագրությունս. այդ ես եմ
հորինել, որ էլեգիան իմ օրերի
թանձր գույներով որդան կարմրի
ձեր դռներով անցած
գոյությունս հիշեցնի...

* * *

Я жизни путь под письменами скрыла –
Всё это выдумка, всё задом наперёд.
Беспамятство (хочу, чтоб всё забыла!) –
Вот та ступенька, что к Всевышнему ведёт.
К порогу, где очистит Он от скверны,
Отредактирует до белого листа
Меня и мир столь шаткий и неверный,
Что перепутаны все звуки и цвета.
Богopodobная (под сердцем мамы)
Имела правду я об истинности сна,
Совпала биосфера с самым-самым –
С чертогом Господа, где вечная весна.
А письмена (хочу, чтоб не винули)
Лишь для того, чтоб вы припомнили о том,
Что жизнь моя мазками кошенили
И ваш когда-то освятила щедро дом.

Ես արքայադուստրը չեմ կյանքի

Ես արքայադուստրը չեմ կյանքի,
 Ես չունեմ կառքեր, աշխետ ձի,
 Հայր ու մայր առագաստ մտած
 Շնորհեցին ինձ մարմին ու հոգի:
 Դղյակներում ես չեմ լինում,
 Չկամ պարահանդեսներին,
 Իմ ոտաբոբիկ լինելու հարցը,
 Երբեք չի դրվել արքունական ժողովներին:
 Հաշվարկված ես չունեմ ոչինչ,
 Ոչ հիմա, ոչ հետո, ոչ առաջ,
 Դռան շեմին հողաթափերն իմ հին,
 Որոնց ճանաչում եմ քաջ:
 Այսպես ես սիրեցի մի օր,
 Կենաց բազմադեմ ասպետին,
 Նա սիրում է կծու համբուրել,
 Սիրում է արցունքները իմ:
 Մեկօրյա արբեցմամբ շամբշոտ,
 Սիրում է տիրանալ ողջին,
 Սիրում է հեռանալ թաքուն
 Ինձ հանձնելով տառապանքի ծովին:
 Ես արքայադուստրը չեմ կյանքի,
 Ես չունեմ կառքեր, աշխետ ձի,
 Հետիոտն կանցնեմ ճամփաներն իմ,
 Ուր տենչում է իմ անեղծ հոգին:

Я НЕ ПРИНЦЕССА ЖИЗНИ

Я не принцесса жизни, ну и что же,
В наследстве нет ни злата, ни дворцов,
Отец и мать, в любви взойдя на ложе,
Мне подарили тело, душу, кров.
Я на балах и в замках не бываю.
К чему? Чтобы царям судить о том,
Что я боса? О планах забываю,
Их просто нет. Ни раньше, ни потом.
Вот тапочки родные у порога –
Смогу из сотен пар легко узнать,
Настолько же любовь моя глубока
К тому, кто любит горько целовать.
Кто этот принц? – Мой век во всех обличьях,
Он любит быть хозяином всего,
То пьян и похотлив до неприличья,
То снова будто не было его,
И мне опять по морю плыть страданий.
Я не принцесса жизни, ни коня,
И ни кареты... Пеший путь скитаний
Туда, куда душа влечёт меня.

* * *

Այսքան երկմտանք հոգուս, մտքերիս,
Սակայն ժպտում եմ,
Ա՛խ, հավատում ես խոշոր աչքերիս,
Նրանք խարում են:
Քամին բերում է երկնիս կապույտին,
Գորշ, ծանր ամպեր,
Անձրևանոցս եմ պահել քո գլխին՝
Դու զարմանում ես...

* * *

Громада сомнений в душе у меня —
Но я улыбаюсь в ответ.
Глазам ты моим, ах, доверился зря,
В них правды ни капельки нет.
Но в час, когда ветер хоронит лазурь
За туч беспросветных хребты,
Тебя укрываю надёжно от бурь
Плащом. Удивляешься ты...

- 0176169 -

Государственная
библиотека
Югры

КО

* * *

Եթերի նման եմ թափանցիկ,
 Բայց և բարդ է, հանելուկ է էությունն իմ,
 Կարո՞ղ եմ ես արդյոք հասնել,
 Ընդերքիս հազարաշող մարգարտին:
 Ես ո՞վ եմ, ո՞վ է նա իմ մեջ,
 Գերիշխող, թե խոնարհ մի ծառա,
 Մի օր՝ նվաղուն, նիրհուն,
 Մի օր՝ բանիմաց սատանա:
 Տարիները խոնջեր ճակատիս,
 Տրտմությունը հեղեղն է հոգուս,
 Կյանքի իլիկին է փաթաթվում,
 Մետաքսյա մի նարոտ-էություն:
 Ինձ ծանելով, թել-թել մանելով,
 Տանում եմ, տանում եմ... Աստծուն:

* * *

Вот парадокс: я, как эфир – прозрачна,
Но в то же время сущностью своей
Загадочна, сложна и многозначна.
Достигну ли заветных я дверей
Сокровищницы собственной Вселенной?
Кто я сама? И кто он, что во мне?
Послушный раб? Правитель дерзновенный?
А может, он подобен сатане?
В дремоте угасают мыслей дали,
Года легли морщинами на лбу,
Душа моя исполнена печали,
Дней круговерть мотается в судьбу.
Мелькают дни – цветные нити шёлка,
Я их пряду – растёт веретено
Самопознания. Пусть безумно долго,
Но только так мне к Богу суждено.

Ոչինչ չի եղել

Ս. Եսենինին

Չմեովա գիշերն երկա՛ր է, հոգիս,
 Չյան փաթիլներն ինչ արագ են իջնում,
 Մեր հետքերը մենք մոռացանք դրսում
 Քամին ջնջում է, ձյունը՝ սավանում:
 Եվ լռության մեջ, լույսերի ներքո,
 Տե՛ս, փաթիլները խաբված թիթեռներ,
 Մեկը տաք շնչով ականջս է խուժում,
 Մրսած մարմինս է ուզում տաքացնել:
 Օ, առավոտն ինչ անհո՛գ է իջել,
 Երեկը արդեն հեռո՛ւ անցյալ է,
 Չյան ճերմակ շերտը
 Ոտնահետքերն է անողոք ջնջել,
 Եվ կարծես ոչի՛նչ, ոչի՛նչ չի եղել...

И НЕ БЫЛО БУДТО СОВСЕМ НИЧЕГО

Сергею Есенину

Ах, друг ты мой, зимняя ночь так длинна,
Так плотен, безудержно скор снегопад.
Цепочки следов – в том не наша вина –
Забыты навек. Ветер смёл. Наугад
Идём мы. Смотри-ка, снежиночный рой
Под светом – обманут – порхает, кружит.
Чу, кто-то дыхания жаркой струёй
Врывается в ухо, тепло сторожит
Озябшего тела... Ну вот и рассвет.
Полотна снегов спеленали его.
Вчерашнее – сон. И следов наших нет,
И не было будто совсем ничего...

Եղե՛լ եմ երբևիցե

Բացում եմ լուսե օրերիս շղթան,
 Ու երգեհոնի նվագի ներքո
 Հաշվում եմ հյուսքը ապրած օրերիս,
 Հանդիպում եմ քեզ որպես ուրացող Պետրոս առաքյալ,
 Ու ես նորօրյա խաչված մի Հիսուս:
 Է՛, օրե՛ք, օրե՛ք, իմ գունեղ կյանքի,
 Ինչպես ապրեցի, ինքս էլ չիմացա
 Ու կասկածում եմ իմ գոյի վրա:

БЫЛА ЛИ Я?

Под музыку органа вопрошаю:

Была ли я когда-нибудь иль нет?

Плетенье светлых дней я открываю,

Внимательно считаю каждый плед,

И там тебя – изменника – встречаю,

А я распята, так же, как Христос...

Эх, жизни дни! Как прожила – не знаю.

Была ли я? – Сомненье и вопрос.

* * *

Կորավ մանկությունը: Գյուղական փողոցները թափուր
 մնացին,
 Քարաքոս, մամուռ, ջրխոտեր համր:
 Անհավատարմություն կա մեր մեջ ի սկզբանե,
 Մենք հերթով լքում ենք բոլորին:
 Շների ենթազգացում-կաղականձի վրա,
 Լուսինը մանեց դեղին լռություն,
 Քահանան թաղեց անտեր պառավին,
 Շուրջը համր էր ու քար անտարբերություն:
 Աշունն էլ չեկավ, տերևները կմեռնեն առանց նրան:
 Ձմեռը կիջնի որպես խստաբարո իշխան,
 Պառավի տանը ոչ ոք չի լինի:
 Մենք կկորչենք քաղաքի մարդաշատ փողոցներում,
 Ծիւերի մեջ գործարանների, մեքենաների,
 Մենք կկորչենք առանց մեր հավատարիմ շների,
 Միայնակ ու անօգ՝ այս մեծ քառսի մեջ աշխարհի:

* * *

На сельских улицах не слышен детский смех,
Всё онемело в страхе запустенья.
Мы неверны, беспечно покидаем всех,
Предательство в нас самого рожденья.
Не остановит нас собак тоскливый вой
В час похорон старухи одинокой.
Её проводят безразличье с немотой
Да лунный свет бесчувственно-далёкий.
Наступит позже листопадная пора,
Потом зима придёт сурово править,
И ни следа нет у старухи со двора,
Изба осиротела – не исправить.
А нам – заблудшим – станут карой города,
Дыханье их чадающее, больное,
Заблудшим мечь – бесцветных буден череда,
Тоска и одиночество глухое.

* * *

Երբ ցամաքեն մի օր հոգուս աչքերը,
Եվ արցունքները քար դառնան հանկարծ,
Երբ խամրեն մի օր աչքերիս կայծերը,
Ժպիտներս ասուպներ դառնան հուսալքված,
Երբ համրանան մի օր հոգուս կոչնակները,
Եվ կարկամ լեզուս չունենա էլ բառ,
Երբ զգոն նյարդերս չսոսկան մի օր,
Եվ աշխարհը դառնա միանար ու պաղ,
Ես կմեռնեմ այդժամ, առանց զգուշացման,
Եվ ճերմակաթն հրեշտակներն իմ հոգին երկինք կտանեն,
Գարունը կգա ժխորով, ծառին զմրուխտ կհագցնի,
Ինձ էլ շորեր կբերի, սակայն ես չեմ հագնվի,
Ու նա, հանց երեխա անմիջական,
Իմ մերկության վրա անո ւշ կծիծաղի...

* * *

Когда в свой час моя душа пустыней станет
И превратится влага слёз моих в гранит,
Когда в глазах моих цветущий блеск увянет,
Не озарят улыбки радости ланит,
Когда в свой час моя душа не отзовется
Окаменеет мой язык, лишённый слов,
Когда последний чуткий нерв не ужаснется
И станет скучен мир и холодно суров,
Тогда умру я, тихо, без предупрежденья,
А слуги Бога мою душу заберут.
Придет шумливая весна и в облаченья
Оденет деревья, в ярчайший изумруд.
Щедра! Мне тоже принесёт она наряды.
Но слишком поздно. Не примерю платье я.
И над моею обнажённостью наяды
Она беззлобно рассмеётся, как дитя...

* * *

Գարուն, թե մի օր գաս
ու ինձ չգտնես,
և պատուհանիս զեփյուռը մեղմիկ
վարսս որոնի սիրելու համար,
ասա՝ գնացի այն հեռուները,
ուր մայրամուտի բոցեղ գույները
լուռ ծրարել են
լինելությանս
լուսե խորհուրդը,
իսկ սե րս՝ հազա ր շուրթ է համբուրում՝
հասու լինելու
մի ճշմարտության...

* * *

Ах, если однажды придёшь ты, весна,
И меня не найдёшь, будет лишь ветерок
Искать мои локоны в створе окна,
Ты скажи, я ушла, и что край тот далёк.
Он там, где заката пылают цвета
И скрывают мою светоносную суть...
Я тысячи раз целовала уста,
Чтоб узнать только правду. Как долог мой путь...

Հաղորդություն

Վահեին

Հիշո՞ւմ ես, ժամանակը երբ խառնվեց.
 երեքն էր, օր էր հունիսյան,
 ճամփաներն երկա՛ր էին, տարբե՛ր,
 մենք դուրս եկանք,
 նրանք մեզ տարան...
 Խաբեցի՞ն, ճիշտն ասած, չգիտեմ,
 քանզի ես գնում եմ դեռ,
 դու հորիզոնն անցել ես,
 դու Ռուբիկոնն ես անցել...
 Ես ճամփին եմ, դու այն ափն ես գետի,
 անճանաչ է օրն իմ ճակատագրում,
 քեզ հասու է խորհուրդը կենաց,
 քեզ հասու է տիեզերքի ամբողջությունը...
 Այսօր երեքն է ու մարտ,
 օրացույցով՝ օր գարնան,
 ժամանակը թիրախ է՝
 մեր լողը կասեցնող ուռկան...

ПРИЧАСТИЕ

Вагану

Ты помнишь день, когда смешалось время?
Июня третье выпало число.
Мы вышли – и дорог различных бремя
Безудержным теченьем понесло...
Дороги обманули? Если честно,
Не ведаю, ведь я ещё в пути,
Ты перешёл земли и неба место,
Свой горизонт. Куда теперь идти?..
Я на дороге, ты – за Рубиконом,
Судьбы безвестен мне грядущий день.
Смысл жизни? – Ясно всё тебе об оном,
Весь космос пред тобою сбросил тень.
А я в пути... Сегодня третье марта
И по календарю весенний день.
Всех невод остановит без азарта –
Седое время, ведь оно – мишень.

* * *

Աշուն, ներիր ինձ՝
քո տերևների դեղնության համար,
չէ որ աշխարհում վառ գույներ կային՝
անթիվ, անհամար...

Աշուն, ների՛ր ինձ՝
լացող երկնքիդ թացության համար,
չէ որ աշխարհում ժպիտներ կային
պայծառ ու անամար...

Աշուն, ների՛ր ինձ՝
անթռչուն ու պաղ օրերիդ համար,
որքա՛ն արևներ տիեզերքը ունի,
որ վառվում են հար:

Աշո՛ւն, իմ աշուն՝ դեղին բախտակից,
կարճ են օրերս ու մահն էլ ինձ կից:

* * *

Прости меня, милая осень, прости
За листьев твоих опадающих желть.
Как ярок был Мир! Только вновь не цвести
Тому, кто почувствовал скорую смерть.
Прости меня, милая осень, прости
За слёзы обильные с мрачных небес.
Пропали улыбки, и не обрести
Повторно их свет. Жизнь скупа до чудес.
Прости меня, милая осень, прости
За пустопорожние хладные дни.
Светил во Вселенной – что в Божьей горсти,
Их вечен костёр, но не греют они...
Одною судьбой мы теперь сплетены,
Ах, осень, одно у нас небо и твердь.
А дни, что остались, увы, не длинны,
И рядом идёт неподкупная смерть.

* * *

Մի կյանք չբավարարեց քեզ հավատալու համար,
 Մի կյանք չմաքրեց մեր մտքերը նենգ,
 Մի կյանք, որ քո լույսով էր օրհնած,
 Օրերն անցկացրեց որպես սովեր:
 Մի կյանք բիբլիական Արարատից իջած,
 Աստվածալեզու Նոյի զարմածես,
 Ծխացող քաղաքներն արևելքի, արևմուտքի
 Մի կյանք են խեղում՝ չեղած որպես:
 Մի կյանք՝ մարգարեի ուսմունք լուսատես,
 Մի կյանք՝ օրերով դարի միջկապում,
 Մի կյանք, որ քո աջով հովանի է մեզ,
 Նույն մեր ձեռքերով է քեզ խաչում:

* * *

Слишком жизнь коротка, чтоб поверить в Тебя без сомненья,
Слишком жизнь коротка, и от скверны очиститься лень,
Слишком жизнь коротка, светоносного благословленья
Мы не зрим во грехе и – слепые – всё прячемся в тень.
Слишком жизнь коротка, нас не учат уроки потопа,
Мы не слушаем Бога, как в этом напутствовал Ной.
И дымят города, стонет Азия, стонет Европа,
И калечатся жизни оружием ада – войной.
Слишком жизнь коротка, мы плюём на заветы пророка,
День за днём, век за веком пороки безвольно любя.
Нашу брENNую жизнь защищаешь Ты дланью от рока,
Но руками своими опять распинаем Тебя.

* * *

Կարոտիս հազար անուններ դնեմ,
 Ու չիմանամ մեզանից ով է ճիշտ,
 Հեքիաթով հազար գիշերներ ողորկեմ,
 Այսպես առհավետ, ընդմիջտ:
 Ո՛վ ունի, ո՞վ ունի անուշ մի նվագ,
 Օրվա մեջ բյուր մահեր եմ ապրում,
 Կյանք իմ, արևոտ Շահրազադե,
 Քո հեքիաթը ինչու՞ ինձ չես պատմում...

* * *

Как тоску мне свою называть, если сотни имён и значений?
И никак не понять – кто тут прав, и не спросишь Творца.
Еженощно я тщусь разгадать этот ребус в стране сновидений,
И вот так постоянно, на целый мой век, до конца.
Для покоя души у кого есть мелодия райского сада?
Каждый день от тоски умираю я тысячи раз.
Почему же ты, жизнь, почему, моя солнечная Шахразада,
Мне никак не расскажешь прекрасный и радостный сказ?..

ՔԵՉ ՉԳՏԱ

Առավոտներս երեկոներիս հետ
Կիսեցի անցա,
Երեկոս լուսնի լույսի հետ
Կիսեցի ու անցա,
Լուսինս արևածագի հետ
Անհետացալ... Ու անցա,
Ամենուր քեզ փնտրեցի,
Քեզ չգտա, երգեր գտա:

ТЕБЯ НЕ НАШЛА

Бодрящие зори, бессонные ночи...

Я в поисках с ними полжизни прошла.

Луны и созвездий холодные очи

Манили к себе, но я мимо прошла.

И так день за днём. Вновь заря поглотила

Луну. Я всё шла за тобой по пятам.

Искала. Лишь песни твои находила,

Что эхом звучат: – Где ты?..

– Там...

– Где ты?..

– Там...

* * *

Ողջույն անգինս: Աշուն է հիմա,
 Միբիրի աշունը՝ գրկում ձների,
 Կյանքի գեղարեւ թատրոնում եղա,
 Եվ տեր խաղացի, և, ապա՝ գերի:
 Զուր ես հայացքդ հարցերով թերթում,
 Նախնյաց շիրմի պես ես էլ եմ անբառ,
 Այս ամբողջից լոկ քո գիրկն եմ հիշում,
 Համբույրդ շուրթիս դաջված ոսկետառ:
 Ողջ առեղծվածից գլուխ չեմ հանում,
 Ո՞վ է կարգել ինձ, պահապան ինչի՞ ...
 Այս ամբողջից լոկ քո գիրկն եմ հիշում,
 Կավեղ շուրթերդ իմ ադամորդի...

* * *

Ну, здравствуй, любимый! Предзимье сейчас.

Сибирская осень – в объятьях снегов.

На жизни подмостках, скажу бес прикрас,

Играла я слуг, и царей, и богов.

Напрасны вопросы во взгляде твоём,

Как предков могилы – я так же нема,

Лишь помню объятья (мы были вдвоём)

Да губ поцелуй... Ах, любви терема!

Загадка трудна, мне её не понять:

Зачем я живу и хранитель чего?..

Лишь помню объятья твои – не отнять,

А более в памяти нет ничего.

* * *

Դու՛ իմ էության կապույտ արտացոլանք,
Դու՛ իմ սրբություն անեղծ,
Քեզ պետք չեն ձոներգեր,
Նվիրումներ պետք չեն քեզ:
Դու դարձար իմ մշտական սաղմոսը,
Հավատ դարձար ու երթերգ...

* * *

Ты – отраженье чистое всей сущности моей,
Моя святыня непоруганная ложью,
Не жжёт тебя желание хвалебных од, речей,
Ты к преданности слеп. А я по бездорожью
Ночей и дней земных иду к тебе, мой милый,
Ты – веры свет во мне, тебе мой гимн красивый...

* * *

Ախր, չգիտեմ, կհասկանաս,
 Որ երգերս դիմակահանդես են սարքել,
 Որ ամեն վայրկյան ու ըռպե,
 Իզուր են քեզ կանչել:
 Որ սպասումը հասունացել
 Ու իմ ներսում ցավ է դարձել,
 Որ քեզ աղոթել եմ
 Ու հավերժ երկրպագել:
 Ախր, չգիտեմ, կհասկանաս,
 Որ ինձ չարչարել ու խաչել,
 Բայց քեզ սրբացրել,
 Քեզ անբասիր եմ պահել:

* * *

Увы, я не узнаю, поймёшь ли ты меня:
Что песнями моими наполнен карнавал,
Что бег минуты каждой, секундами звеня,
Тобою не замечен и зря тебя позвал.
Что гроздь ожидания созрели, их вино
Внутри меня в густую перебродило боль,
Что на тебя молилась, придавлена виной,
Тебе лишь поклонялась, жила одним тобой.
Увы, я не узнаю, поймёшь ли ты меня:
Что я себя распяла гвоздями светлых грёз,
Тебя боготворила, полна любви огня,
Твой образ безупречный храня в колодце слёз.

* * *

Երեկոներն այստեղ ոսկի են մանում,
 Ու թելիկ-թելիկ շաղախում խանձված դեմքերին,
 Հեքիաթներն այնպես ակամայից են ծնվում ու ծնվում,
 Որ ինձ թվում է հեքիաթ ես դարձել:
 Աշուն է արդեն, կարոտը այնքան հասուն է դարձել,
 Որ հազար տեղից ճաքեր է տվել,
 Չգիտեմ հիմա իրական ես դու, թե՞ պատրանք,
 Որին այնքան կենդանի հույսեր եմ կապել:

* * *

Здесь золото ткут вечера увлечённо
В ковёр многоликий за ниткою нить,
Здесь сказки рождаются непринуждённо,
И ты – тоже сказка. Ах, мне бы любить!
Но – осень. Тоска, как лещина, созрела, –
Исчерпаны сроки – трещит скорлупой.
Ты явь или мираж? Как бы знать я хотела!
Так много надежд я связала с тобой.

* * *

Երբեմն բթացած ու կոշտ
Մի ծույլ կուրություն է իջնում
Իմ ուղեղի, աչքերի ու մարմնի վրա:
Ու չեմ նկատում նույնիսկ,
Պարզորոշ, ակնհայտ մի բան,
Հորիզոնը սպիտակ ու մառ,
Անգո, անձև ու չկա...

* * *

Внезапный час жестокой слепоты
Порабощает разум мой и тело.
Не избежать нежданной маеты.
Был ясен мир, и вдруг всё опустело.
Мечтанья словно взрывом разнесло,
И всё вокруг аморфно и бесцветно.
Туманен горизонт... К чему весло?
Плыть в никуда – бессмысленно и тщетно.

* * *

Ուղեղի ուռկան, երբ դու ճեղքում ես
Մտային ծովերն ու որսում պահերի
Խոսող, ոսկե ձկնիկին,
Ես այն հարածարավ պառավի նման,
Ջանում եմ ունենալ... ամբողջ ընտանիքը նրա:
Ուղեղի ուռկան, ես բարի ծերուկը չեմ, սակայն
Իմ չարությունը պիտի ընդունվի միաձայն:
Երբ ետ արձակեմ նրան հողը հայրենի,
Նա կմատնվի կորստյան:


* * *

О, разума невод, когда рассекаешь ты море
Бесчисленных мыслей и вдруг вынимаешь на свет
Мгновенье, как рыбку в прекрасном златом ореоле,
Корыстной старухой из сказки – сомнения нет –
Я стану тотчас, ведь хочу получить... все мгновенья.
О, разума невод, я не добродушный старик,
Желанье должно быть исполнено без промедленья, –
Нельзя отпустить, навсегда потеряется миг...

ДРОГАМИ ПОТЕРЬ И ОБРЕТЕНИЙ

Павел Черкашин, перевод на армянский язык Наиры Симонян

Պավել Չերկաշին, ռուսերենից թարգմանությունը՝ Նաիրա Միսնոյանի



* * *

Гордиться, тяготиться ли судьбой,
Что посылает каждого на бой
За право называться человеком,
И смертью рассчитается с тобой?..

* * *

Հպարտանալ, թե՞ խոռվել բախտից,
Որն ամենքին է մարտի հղում
Մարդ կոչման իրավունք ստանալու:
Եվ մահվամբ է քեզ փոխհատուցում...

* * *

В позолоту мерцающих звёзд,
В молоко полнолунной ночи,
До созвездий – космических гнёзд –
Я хочу улететь. Замолчи!

Не держи меня. Знаю, что любишь.
Верю в искренность ласки твоей.
Но ведь ты окрылённого любишь,
Я – крылатых небесных кровей.

Отпусти! Белоснежные крылья
Снова просятся в дальний полёт.
Не грусти, о тебе не забыл я,
О тебе моё сердце поёт.

Я поведаю братьям пернатым,
Что тобою так ярко горю.
Никогда не бывал я богатым,
Но я крылья тебе подарю!

* * *

Ոսկեգոծում փայլող աստղերի,
Կաթնագույնի մեջ գիշերվա լիալուսնի,
Մինչ համաստեղություններ տիեզերաբների,
Ես թռչել եմ ուզում: Լռի՛ր:

Ինձ մի՛ բռնիր: Գիտեմ, սիրում ես,
Հավատում եմ անկեղծ քո փայփայանքին:
Բայց ախր թևավորին ես դու սիրում,
Նրանց երկնազարմից եմ ես սերում:

Բա՛ց թող: Ձյունճերմակ թևերը
Նորեն հեռավոր թռիչք են հայցում:
Մի տիրիր, ես քեզ չեմ մոռացել,
Իմ սիրտը քո մասին է երգում:

Փետրավորներիս քո մասին կպատմեմ,
Որ քեզանով եմ պայծառ այրվում:
Ես երբեք հարուստ չեմ եղել,
Բայց քեզ թևեր եմ նվիրում:

* * *

Грядущим жить? – Обман! Обман!
Я был певцом мечты.
Но вот разбился талисман
Той призрачной четы.

Свободен я от грёз и снов,
Но выиграл ли я?
Что в настоящем? – Звон оков
И в рубище земля.

* * *

Գալիքով ապրե՛լ – խաբկանք է, խաբկանք,
Ես երգիչն էի երազների:
Ահա համային է փշրվել
Այն տեսլային զույգի:

Ես ազատվել եմ անուրջ-երազներից,
Բայց շահել եմ արդյոք,
Ներկայում ի՞նչն է: Ջնգոց շղթաների,
Եվ վիրամաշ հող:

* * *

Одинаково любить я не умею.
И не смею.

Откровение людей я не проверю,
Я им верю.

И, бывает, многое теряю –
Доверяю.

Боль чужую близко принимаю –
Понимаю.

Пусть немало горечи изведал –
Я не предал.

И большого зла не совершил –
Пусть грешил.

Ни души, ни веры не убил –
Я любил.

Неужели я любви не заслужил?
А ведь жил.

* * *

Նույնատիպ սիրել ես չեմ կարող:
Չեմ էլ հանդգնում,

Մարդկանց շիտակը չեմ ստուգում,
Նրանց հավատում եմ:

Լինում է, շատ բան կորցնում եմ՝
Վստահում եմ:

Ուրիշի ցավը սրտիս մոտ ընդունում՝
Հասկանում եմ:

Թեև դառնություն քիչ չեմ ճաշակել՝
Չեմ դավաճանել:

Գործած չարիքս մեծ չի եղել թեև՝
Մեղանչել եմ նաև:

Հավատ ու հոգի չեմ սպանել՝
Սիրել եմ:

Մի՞ թե սիրո չեմ արժանացել՝
Չէ որ ապրել եմ:

* * *

Доброта не в моде ныне.
Совестятся, что ль, её?
Реже думает о сыне
Мать, заморское бельё
Продающая на рынке.
Да и он не пишет ей.
Дед глядит с фотокартинки
Огорчённо на детей.
Очерствели наши души.
Если завтра на заре
И любовь очаг потушит,
Зябко станет на земле.

* * *

Բարությունը չէ հիմա մողայում:
Ինչ է, խղճում են նրան,
Որդու համար հազվադեպ է մտահոգվում
Մայրը, ներքնազգեստ արտերկրյա
Վաճառող շուկայում:
Ոչ էլ գրում է նրան որդին:
Պապն հիասթափ է նայում
Լուսանկարից զավակներին:
Մեր հոգիներն են քարացել:
Եթե վաղը արշալույսին
Մերն էլ իր կրակը մարի,
Ցուրտը կտիրի աշխարհին:

* * *

Видит Бог – живу я не напрасно.
Пусть не велика земная роль
Дел моих. Служитель беспристрастный.
Я не раб, но я и не король.

Дар пророка тоже мне не ведом,
Хоть и говорят: поэт – пророк.
Я иду давно известным следом
По седому кружеву дорог.

Те же звёзды в полночи сверкают,
И гудит приветливо костёр.
Дни бегут, судьбу мою слагают,
То в шалаш приводят, то в шатёр.

Всё же есть непознанная тайна
В толще лет. И где ни окажись,—
Так закономерна, так случайна
Человеком прожитая жизнь.

* * *

Աստված տեսնում է՝ իզուր չեմ ապրում:
Մեծ չէ երկրային դերն էլ
Գործերիս: Արդարադատ եմ:
Ոչ ծառա եմ, և ոչ էլ արքա եմ:

Ինձ հասու չէ ձիրքը մարգարեի,
Թեև ասում են՝ մարգարե է պոետը:
Ես գնում եմ հին արահետով հայտնի,
Խճճված ճամփաներով բազմուղի:

Կեսգիշերում նույն աստղերն են շողում,
Խարույկն է մեղմիկ ճարճատում,
Վազում են օրերը, բախտս են հորինում,
Մերթ հյուղակ ու մերթ էլ վրան ուղեկցում:

Կա, այդուհանդերձ, անճանաչ խորհուրդ
Տարիներում: Եվ հանկարծ ուր էլ հայտնվես,
Այնքան համաչափ են, այնքան հանկարծակի
Մարդու ապրած օրերը կյանքի:

* * *

С каждым годом ближе и верней
Та граница, за которой – осень.
И, теряясь в вихре листьев-дней,
Не заметив, платье жизни сбросим.

И всё чаще налетает грусть
О былом, что в памяти осталось.
Листья облетают. Ну и пусть.
Только жаль, что всё сильнее усталость.

Всё острее, мучительнее боль,
Непосильней ноша за плечами.
А судьба – загадочная роль,
Ей сценарий пишется не нами.

Счастье – вот, лишь руку протяни,
Но мечты опять бесследно тают,
Снова в ожиданьи мчатся дни.
Облетают листья, облетают.

Кто-то раньше, кто-то после нас
Скроется в объятьях снегопада,
Только нет смиренья и сейчас:
Так неожиданно, скоро так – не надо!

* * *

Մոտիկ է ու ստույգ տարեցտարի
Սահմանն այն, ուր լինում է աշունը:
Եվ մոլորվելով բքում տերև-օրերի,
Աննկատ կյանք-հանդերձն ենք հանում:

Հաճախ թախիժն է խուժում
Ապրածի, որ մնացել է հուշերի խորքում:
Տերևաթափ է: Թող այդպես լինի:
Բայց ափսոս, հուժկու է հոգնությունը:

Օրավուր ցավը սուր է, տանջալի,
Եվ ծանրանում է բեռը ուսերի:
Իսկ բախտը դեր է հանելուկով լի,
Որի սցենարը մեզ հետ չեն գրի:

Երջանկությունն, ահա, միայն ձեռքդ պարզիր,
Կրկին անհետ են երազները հալվում,
Նորեն սլացքում է սպասումն օրերի:
Թափվում են տերևները, թափվում:

Մեկն առաջ մեզնից, ու հետո մեկն էլ,
Գրկում, պահվում է սավանում ձնե,
Միայն մենք չենք հաշտվում այժմ էլ.
Վաղ ու անսպասելի է, պետք չէ:

* * *

Не дай, Господь, уйти до срока,
Не дай детей осиротить,
И без того кратка дорога,
Позволь успеть благословить
В Твой мир пророщенное семя,
Вручить им крепкое весло,
Чтоб не смело их злое время
И в счастье больше повезло.

* * *

Տեր իմ, թույլ մի տուր գնալ վաղաժամ,
Թույլ մի տուր բալիկներիս որբացնել,
Կարճ է առանց այդ էլ կենաց ճանապարհը,
Թույլ տուր հասցնեմ օրինել
Քո ոլորտում աճեցրած սերմերը,
Ու ամուր թիակներ նրանց շնորհել,
Որ չարքի- տանի չար ժամանակը
Եվ երջանիկ երկար ապրեն:

* * *

Вешним цветом утро пьяно,
Кличут солнце глухари,
И оно встаёт румяно
В одеянии зари.

Золотистая тропинка
Через речку пролегла...
Эх, российская глубинка!
Сколько тайны сберегла

Ты в своих глазах озёрных,
В вековечном сне лесов,
В дождевых жемчужных зёрнах,
Даже в хриплом лае псов

На коров бредущих стадо
Через мост на водопой.
Здесь я дома. И не надо
Мне сторонущи другой!

* * *

Գարնան գույնով է այգը հարբած,
Մրրկահավերն են կանչում արևին,
Եվ արշալույսի բոսորը հագած՝
Դուրս ելավ արփին:

Տես, ոսկեգույն արահետը
Հատել է գետն, երկարել,
Օ՛, հարագատ իմ գավառ,
Որքան գաղտնիք ես պահել

Քո լճերի աչքերում,
Անտառների խոր քնում,
Անձրևների մարգարտում,
Դեպի ջուրը գնացող

Նախրի վրա թափառող
Շների խոպոտ հաչում:
Տանն եմ այստեղ, ու չեմ ուզում
Ուրիշ անկյուն հեռավոր:

* * *

На пустыре, где выше плеч крапива
И путами вьюнка стреноженный бурьян,
Глотаю жадно грёз хмельное пиво
И беспричинно плачу, будто в стельку пьян.
Тоска моя почти всегда слезлива,
Наверное, таков души моей изъян,
Но он же лекарь: пусть неторопливо, —
Затягивает шрамы злых житейских ран.

* * *

Ամայությունում, ուր եղինջներն են փարթամ,
Եվ ագուցվել են պատատուկ ու մոլախոտ,
Ես կոնծում եմ անուրջների ոգելիցն արբեցման,
Եվ անառիթ լալիս եմ հանց թունդ գինեմուլ:
Թախիծս գրեթե միշտ է լինում լալկան,
Հոգուս թերությունն այդպիսին է երևի,
Բայց նա բժիշկ է, թող կամաց – կամաց
Չար կենաց վերքերն իմ ամոքի:

* * *

Волнующий осколок лета:
